ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4146-Ա « 13 » հոկտեմբերի 2025թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 12-րդ կետի 1-ին ենթակետը.

1. Երևանի քաղաքապետարանի մի շարք խոշոր ենթակառուցվածքային և քաղաքաշինական ծրագրերի շրջանակներում Համալրված իրականության (AR) և Վիրտուալ իրականության (VR) հիմքով թվային կրկնօրինակի ստեղծման, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրային շենքերի կանաչ և կայուն հավաստագրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ) սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում՝ հետևյալ կազմով.

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Մերի Հարությունյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Պատասխանատու ստորաբաժանման անդամներ՝

Միքայել Զալինյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գլխավոր գործառնական ղեկավար
Ալինա Եղիազարյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի զարգացման և գործընկերության ղեկավար
Լուսինե Ջանազյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի մասնավոր գործառնությունների և ռենովացիոն ծրագրերի ղեկավար
Մերի Հայրապետյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հանրային շենքերի ծրագրերի ղեկավար
Տիգրան Մուշեղյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տրանսպորտի և մետրոյի ծրագրերի ղեկավար

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ